

Արամ Հայրապետյանի «Բնական խոսքի ընդհանրական ներկայացման մի տարբերակի մասին» աշխատությունը

Արամ Հայրապետյանի «Ագուլիս» հրատարակչությունում 2022 թ. տպագրված աշխատությունը հրաշալի անակնկալ է, և միաժամանակ, առաջընթացի խոստում է հայ լեզվաբանության և հաղորդակցման գիտության նորարարական զարգացման համար, մասնավորապես, հայերենով թվային հաղորդակցման ոլորտի գիտնականների, ծրագրավորողների և կրթական ծրագրեր կազմող մասնագետների համար, որովհետև լայն առումով, այն լեզվի թվային մշակումով զբաղվող մասնագետներին է հրամցում ժամանակակից հայոց լեզվի ձևայնացման և իմաստային կաղապարման մինչև այժմ չեղած տեղեկատու ձեռնարկը:

Բնական խոսքի կաղապարման միտումներն սկիզբ են առել դեռևս նախորդ դարի երկրորդ կեսին, և արդի լեզվաբանության մեջ մեծ տեղ են զբաղեցնում: Դա պատճառաբանված է նախ թվային տեխնոլոգիաների զարգացմամբ ու տարածումով, ապա՝ բնական խոսքի թվայնացման և տեքստերի մշակման տարանպատակ խնդիրներով: Ընդհանրական ներկայացումը կամ մոդելավորումը հնարավորություն է տալիս միևնույն սկզբունքներով ներկայացված տարբեր լեզուներ ներառել մեկ հաղորդակցական համակարգում, դրանք փոխադարձաբար թարգմանելի դարձնել մեքենայական միջոցներով: Մյուս կողմից, ցանկացած օբյեկտի գիտական տեսականացումն ինքնին հանգում է կաղապարման գաղափարին, և այդ առումով առաջ է քաշում համընդհանուր տրամաբանական եզրահանգումներ:

Շատ հեռու չգնալու համար, որպես օրինակ հիշենք Գևորգ Ջահուկյանի համընդհանուր լեզվի տեսությունը, որն իր վաղ և ուշ տարբերակներով հրատարակվել է առնվազն երկու անգամ, արտացոլելով գիտնականի ընդհանուր լեզվաբանական հայացքները: Թեև իր ժամանակին լեզվի թվայնացման հնարավորությունները դեռևս բավականաչափ տարածված չէին, նման աշխատություննե-

րը չեն մոռացվում: Ուստի, զարմանալի չէ, որ Ա. Հայրապետյանի աշխատության մեջ էլ է հիշատակված Գ. Ջահուկյանի տեսությունը. այն սերմի նման վերածնվել և իր զարգացումն է ստացել այս նոր սերնդի աշխատության մեջ: Կարծում ենք, որ այս առումով, գրախոսվող աշխատությունն իր գիտական նախադրյալներն ունեցող հաջողված աշխատություն է:

Հեղինակը նշում է, որ գիրքը արևելահայերեն լեզվի՝ թվային գործածության համար հասանելի ձևայնացման համալիր՝ «ծառի տեսքով» կադապարված ներկայացում է:

Առաջարկված կադապարը հնարավորություն է տալիս մշակելու հայերեն լեզվական միավորների հիմքատման, պիտակավորման, լեմմավորման ալգորիթմները, որոնք իրենց կիրառվում են բնական լեզվի պարունակած տեղեկության և գիտելիքի հետ աշխատելու տարբեր նպատակներով:

Ա. Հայրապետյանն իր աշխատության մեջ լեզվի թվային մեկնաբանությամբ զբաղվող մասնագետների և պարզապես, հետաքրքրվողների համար բացատրում է մի շարք կարևոր հասկացություններ և եզրեր խոսքային հաղորդակցման և հոգելեզվաբանության, իմաստաբանության ոլորտներից: Այդպիսի հասկացական հարաբերություններ են ուղերձի իմաստի ձևավորումն ու բովանդակության քերականական կողմավորումը: Ներկայացված է նաև արհեստական բանականության՝ ներդրային ցանցերով խորքային ուսուցման հակիրճ տեսությունը, այն լուսաբանելով ցանցերի ճարտարապետության՝ հաջորդականությունից հաջորդականություն կառուցելու օրինակով:

Առաջարկված կադապարումը թույլ է տալիս նաև մաթեմատիկական վիճակագրության մեթոդներ կիրառել խոսքի ֆորմալ մշակումների և տեղեկույթի վերլուծության, գիտելիքի զտման նպատակներով:

Գրքի բովանդակության կառուցվածքի համառոտ նկարագիրը հեղինակը տվել է «երկու խոսք»-ով: Նկատենք, որ գիրքը կառուցված է լեզվաբանական բազային կրթություն ունեցողի համար

մատչելի կերպով, մի բան, որ ավելի է մեծանում նրա արժեքը բնական լեզվի մշակման մյուս՝ մաթեմատիկական հասկացական հիմքով կազմված ձեռնարկների համեմատությամբ:

Ներածական բաժնում հաղորդակցական կադապարման տեսանկյունից հակիրճ ներկայացված են մտքի և խոսքի միավորների ու հարաբերության տեսակները:

Այնուհետև, նույնպես սեղմ կերպով, տրված են խոսքային կադապարի գաղափարն ու միավորները: Դրանց հաջորդում են լեզվի բառաձևերի՝ արդեն ծավալուն նկարագրությունները՝ ձևաբանական, խոսքիմասային և բառակազմական կադապարման հարաբերությունների մեջ: Ձևաբանությունն ամփոփող բաժնից հետո ընթերցողին է տրամադրվում եզրերի բառադարան, տեքստի հարացուցային ծառն իբրև նկարագրության տարբերակ:

Տասնմեկերորդ և տասներկուերորդ բաժինները անմիջականորեն նվիրված են բառաձևերի հիմքատման, լեմմավորման և նախադասության վերլուծության ու ձևայնացման խնդիրներին:

Կրկին անդրադառնալով մտավոր գործունեությանը, հեղինակը դիտարկում է դրա բարդ և ոչ միանշանակ խոսքային դրսևորումների խնդիրն:

Գրքի գրեթե կեսը կազմում է պիտակների տեղեկատու հավելվածը: Սակայն մինչ այդ, ուսանողներին և ոչ մասնագետ ընթերցողին ներկայացվում են բնական լեզվի այսօրինակ մշակման կիրառական ոլորտները՝ բառաշտեմարաններ, կորպուսներ, սրբագրման համակարգ, որոնող շարժիչներ, հանրագիտարան, թարգմանություն, ի վերջո, լեզվաբանի, և ավելացնենք՝ լեզվուսուցման աշխատանոց:

Ոչ պակաս կարևոր հանգամանք է այն, որ հեղինակի խոսքն աչքի է ընկնում հակիրճ և հստակ ոճով, մի կոնկրետություն, որն անհրաժեշտ է կիրառական խնդիրների արդյունավետ լուծումներ որոնելիս:

Կարծում եմ, որ հումանիտար և սոցիալական ոլորտի համընդհանուր թվայնացման պայմաններում, սա արդեն իսկ լավ

սկիզբ է նախկինում հայերենով նման աշխատություն չունեցող մեր գիտական և մասնագիտական հանրության համար: Մասնավորապես, գիրքը կարող է դասագրքային և քրեստոմատիկ-տեղեկատվական նշանակություն ունենալ բուհում «Հաշվողական լեզվաբանություն» կրթական ծրագրի իրականացման ժամանակ, ինչպես նաև կորպուսային լեզվաբանության և արհեստական լեզվախոսքի ծրագրավորման հարցերով զբաղվողների համար:

**Բան.գիտ.դոկտոր, պրոֆեսոր
Գայանե Ռ. Հովհաննիսյան**